ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 մայիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

63
(2729)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ ՈՉ ԱԶԱՏ

Այսօր Մամուլի ազատության օրն է: 1994թ.-ից սկսած՝ ամեն տարի՝ մայիսի 3-ին, նշվում է Մամուլի ազատության համաշխարհային օրը: Եվ չնայած ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է», սակայն լրագրող-իշխանությունների կողմից մամուլի դեմ ամենաշատ քայլերն են իրականացվել ՀՀ-ում հեղափոխությունից հետո: Հեղինակավոր Amnesty International իրավապաշտպան կազմակերպության տարեկան վերջին զեկույցում նշվել է, որ Հայաստանում խոսքի ազատությունը շարունակում է սահմանափակված մնալ՝ իշխանությունների ջանքերով: Մասնավորապես, 2022 թվականի գարնանն Ազգային ժողովը վիրավորանքի ու զրպարտության համար նախատեսված տուգանքի վերին շեմը բարձրացրել է: Ավելի ուշ օրենսդրական փոփոխությունների մեկ այլ փաթեթով խորհրդարանը քրեականացրեց հանրային դեմքերին վիրավորանք հասցնելը: Ալեն Սիմոնյանի՝ Ազգային ժողովի նախագահ ընտրվելուց հետո էլ խորհրդարանում սահմանափակվեց լրագրողների ազատ տեղաշարժի իրավունքը: Freedom House-ի զեկույցի համաձայն՝ Հայաստանը 55 միավորով շարունակում է մնալ «մասնակի ազատ» երկիր: Արձանագրվել են լրագրողների նկատմամբ 20-ից ավել բռնության դեպքեր:

Այժմ անդրադառնանք Նիկոլ Փաշինյանի մի քանի որակումներին՝ արված լրագրողների հասցեին: 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ Նիկոլ Փաշինյանը քարոզարշավի ընթացքում բազմիցս աչքի է ընկել ատելության խոսքով: «Այսօր Հայաստանի լրատվական դաշտը, կներեք արտահայտությանս, վերածվել է իսկական աղբանոցի»,- քարոզարշավի ընթացքում ասել է նա:

2020 թվականի փետրվարի 20-ին Փաշինյանը հայտարարել էր. «Լրատվամիջոցների 99%-ը եւ լրագրողների 70%-ն իշխանություններից փող են ստացել: Կամ այս տարի, խոսելով լրագրողների աշխատելաոճի մասին, Փաշինյանը նշել էր, որ իրեն զարմացնում է՝ ինչպես է լրագրողների «պարսը» հետապնդում ԱԺ պատգամավորին:

Այսինքն՝ Նիկոլ Փաշինյանը, որ նախկին լրագրող է, ընդդիմադիր թերթի խմբագիր է եղել, ամենաշատն է թիրախավորել լրագրողներին: Նրա օրոք շարունակել են ոտնահարվել լրագրողների իրավունքները, ու մամուլի ճնշման համար մեծ թվով օրենսդրական նախաձեռնություններ են ընդունվել:



Տարիներ առաջ Փաշինյանը հայտարարում էր, որ պետք է փակել «խնամի-ծանոթ-բարեկամով» Հայաստանի էջը եւ բացել քաղաքացիական Հայաստանի էջը: Վստահեցնում էր, որ իր վարչապետության ժամանակ «խնամի-ծանոթ-բարեկամ» ինստիտուտը չի գործելու: Բայց, արի ու տես, ինչպես մյուս դեպքերում, Նիկոլ Փաշինյանի իշխանությունը ոչ միայն չի կատարում իր խոստումը, այլ փաստացի հեղափոխական իշխանությունը «խնամի-ծանոթ-բարեկամ» խմբապետական Հայաստանի նոր էջ է բացել: Պարզվում է՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը, ով նախկինում Ալեն Սիմոնյանի օգնականի պաշտոնն էր զբաղեցնում, իր բարեկամներին ԱԺ-ում աշխատանքի է տեղավորում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հասմիկ Հակոբյանը պատգամավորի օգնականից պատգամավոր դառնալուց հետո հասցրել է հարազատ հորը՝ Արմեն Հակոբյանին տեղավորել ԱԺ-ում՝ աշխատանքի: Արմեն Հակոբյանը ԱԺ վարչատնտեսական վարչության ավտոտրանսպորտային բաժնում է աշխատում: «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով մեկնաբանության համար դիմեց Հասմիկ Հակոբյանին, որը, բնականաբար, չհերքեց մեր տեղեկությունները՝ նշելով, որ ոչ մեկը չպետք է տուժի՝ մյուսի պաշտոնով պայմանավորված: Այսպիսով, պատգամավորը փորձում էր համոզել, թե իր հայրը ԱԺ-ում է աշխատում՝ ոչ իր գործոնով պայմանավորված, մինչդեռ հայտնի ճշմարտություն է, որ պատգամավոր Հակոբյանի հայրը աշխատանքի է տեղավորվել ԱԺ-ում, երբ Ալեն Սիմոնյանն է դարձել ԱԺ նախագահ, եւ նախկինում երբեք չի աշխատել ԱԺ-ում: Ստացվում է՝ «ԽԾԲ»-ական գործելաոճը մերժող հեղափոխականները ոչ միայն չեն հրաժարվել նախկինների արատավոր բարքերից, այլ հենց իրենք են «ԽԾԲ»-ն ծաղկեցրել գրեթե բոլոր ոլորտներում: Շարունակելի...

ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների բանակցությունները, բնականաբար, մեծ հետաքրքրություն են առաջացրել Լաչինի միջանցքում տեղադրված անցակետերի ֆոնին: Երեկ ԱԺ իշխանական պատգամավորների շրջանում հարցուփորձ արեցինք՝ ինչ գիտեն, ինչ է կատարվում Արցախի շուրջ: Արդյոք Արցախի Հանրապետությունը ունի՞ ապագա, եւ որտե՞ղ է այն: Պարզվեց, որ իշխանականների միայն նեղ շրջանակ է տեղյակ, թե ինչ են բանակցում հայկական եւ ադրբեջանական կողմերը Վաշինգտոնում. շատ դեպքերում ՔՊ-ականները մամուլից են տեղեկանում բանակցությունների մանրամասների մասին: Կարելի է ասել՝ ՔՊ-ականները շունչները պահած սպասում են, որ այսօր Փաշինյանը խորհրդարանում կներկայացնի՝ ինչ է բանակցում Հայաստանը Վաշինգտոնում, ի վերջո, նոր փաստաթուղթ լինելու է, թե ոչ: Իշխանական պատգամավորներն իրենք էլ հասկանում են, որ պահն իսկապես լուրջ է, դանակը ոսկորին է հասել, եւ Հայաստանն այլեւս մանեւրելու տեղ չունի, դրա համար էլ փորձում են հանրության ականջին կաթեցնել արցախահայությանը Ադրբեջանի կազմում որպես էթնիկ փոքրամասնություն դիտարկելու հնարավորության մասին, իրենց խոսքով՝ միջազգային հանրության անվտանգային երաշխիքների առկայության պայմանով: Իսկ թե ինչ երաշխիքներ են դրանք, ով պետք է տա այդ երաշխիքները, կամ այդ երաշխիքները կարող են արդյոք զսպել Ադրբեջանի ցեղասպանական նկրտումները, թերեւս իշխանականներն իրենք էլ չգիտեն:

Հաշվեքննիչ պալատը խնդիրներ է հայտնաբերել «Հայանտառ» ՊՈԱԿ-ում: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ ՊՈԱԿ-ի կողմից կնքված 9 վարձակալության պայմանագրերում չի պահպանվել անտառների վարձավճարների սահմանված նվազագույն չափը: Այս հանգամանքը հանգեցրել է մի իրավիճակի, որ 2019-2020 թվականների ժամանակահատվածում 14 մլն դրամի վարձավճարներ չեն գրանցվել: Այլ խախտումներ եւս կան. բացակայում են ՊՈԱԿ-ի «Մեկ անձից գնում» ընթացակարգի համաձայն կատարված գործարքների հաշվետվությունները: Նաեւ մատուցվել են այնպիսի ծառայություններ, որոնք նորմատիվ իրավական ակտերի կանոններով չեն եղել: Նշենք, որ այս ընթացքում ՊՈԱԿ-ի տնօրեն Վահե Մացակյանն արդեն իշխանական թիմի ներկայացուցիչ էր: Նա 2019 թվականի սեպտեմբերի 24-ին նշանակվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար, 2020 թվականի ապրիլի 8-ին՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն: Նա նախկինում այդ ՊՈԱԿ-ում էր աշխատում, այսինքն՝ նա հեղափոխական գործիչ չէ, սակայն այդ հանգամանքն էլ չի խանգարում, որ նրա գործունեության ընթացքում եւս խնդիրներ լինեն:

ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐ

ՆՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՉԻ ԼԻՆԻ

Հայաստանի եւ Ադրբեջանի արգործնախարարները Վաշինգտոնում բանակցություններ են վարում՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի միջնորդությամբ:

«Ամերիկայի ձայն»-ը հոդված էր հրապարակել, որ Վաշինգտոնում Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները բանակցում են մի փաստաթղթի շուրջ, որը կրում է «Հարաբերությունների կարգավորման համաձայնություն» անունը: Ըստ այդ հոդվածի՝ համապարփակ համաձայնագրի շուրջ ընթացող բանակցություններում կողմերի միջեւ քննարկվող հարցերից մեկն է վերաբերմունքը էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ երկու երկրներում, որն անդրադառնում է էթնիկ փոքրամասնությունների իրավունքներին ու անվտանգությանը:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանի հետ:

-Պարոն Պապոյան, Ձեզ հայտնի՞ է՝ ինչի շուրջ են բանակցում Վաշինգտոնում. կա՞ որեւէ փաստաթուղթ:

-Կոնկրետ ինչի շուրջ են բանակցում՝ տեղեկություն չունեմ, բայց գիտենք, որ, ընդհանուր առմամբ, խաղաղության պայմանագրի շուրջ են բանակցությունները գնում: Մինչ այս Հայաստանը եւ Ադրբեջանը փաստաթղթեր, առաջարկներ էին փոխանակում, զուգահեռ նաեւ տարբեր հարթակներում Վաշինգտոնում, Մոսկվայում, Բրյուսելում տեղի էին ունենում հանդիպումներ: Երբ մենք խոսում ենք խաղաղության պայմանագրի եւ մեր ձգտման մասին, որ խաղաղություն լինի, այնպես չէ, որ մի օր մեկը հայտնվելու է եւ ասի՝ եկե՛ք այս փաստաթղթի տակ ստորագրեք, եւ խաղաղություն կհաստատվի: Դա երկար գործընթաց է, որին նախորդում են հսկայական բանակցություններ: Մենք ունենք մեր կարմիր գծերը, մյուս կողմն ունի իր կարմիր գծերը. երբ այդ կարմիր գծերը մոտենան, այդ ժամանակ էլ խաղաղության պայմանգիր կլինի:

-Որո՞նք են հայկական կողմի կարմիր գծերը:

-Հայկական կողմի կարմիր գիծը Հայաստանի 29.800 ք/կմ տարածքն է, կան նաեւ այլ կարմիր գծեր: Ադրբեջանն ասում է՝արցախահայերը չպետք է ունենան որեւէ իրավունք, որը կտարբերվի Ադրբեջանի այլ քաղաքացիների ունեցած որոշակի իրավունքներից, ինչը, ցավոք, հնարավոր չէ, քանի որ այդ դեպքում արցախահայությունը ցեղասպանության կենթարկվի: Ադրբեջանը Նիդերլանդները չի, որ ասենք՝ նորմալ է. այս դեպքում էթնիկ զտման են ենթարկվելու արցախահայերը, այստեղ առաջանում է հայերի իրավունքների հարցը: Մենք չենք ասում, որ, օրինակ, Նիդերլանդներում ապրող հայերը պետք է ունենան այդպիսի իրավունքներ. իրենք եթե ունենան այնպիսի իրավունքներ, ինչպիսին այնտեղ ապրող քաղաքացիները, դա բավարար է Նիդերլանդներում անվտանգ ապրելու համար, բայց Ադրբեջանին բավարար չէ. այդ մարդկանց կսպանեն, կուսեզրկեն, կստորացնեն, այնպես կանեն, որ իրենց բնակավայրերից դուրս գան, հետեւաբար լրացուցիչ երաշխիքներ են պետք, ընդ որում՝ ոչ միայն թղթային, այլ նաեւ միջազգային հանրության որոշակի պարտավորություններով ամրագրված:

-Պարոն Պապոյան, ի վերջո, Վաշինգտոնյան բանակցությունների արդյունքում կողմերը նոր փաստաթուղթ պատրաստվո՞ւմ են ստորագրել:

-Չեն կարծում՝ նոր փաստաթուղթ է ստորագրվելու, բայց համաձայնությունների շուրջ բանակցում են: Մենք ունենք մեր կարմիր գծերը, ենթադրաբար մյուս կողմն էլ իր կարմիր գծերն ունի. եթե այդ կարմիր գծերը չափից ավելի հեռու են, ենթադրաբար խաղաղության պայմանագիր չի կնքվի, իսկ եթե կողմերը քայլեր անեն ընդառաջ, պայմանագիրը կկնքվի: Հնարավոր չէ, որ միայն մենք անենք քայլեր, կամ միայն իրենք անեն քայլեր. դա իլյուզիա է: Դա լինում է միայն այն դեպքում, երբ կողմերից մեկը կապիտուլյացիայի է ենթարկվել, բայց ո՛չ Հայաստանն է 44-օրյա պատերազմից հետո կապիտուլյացիայի ենթարկվել, ո՛չ էլ Ադրբեջանը՝ 1994թ.-ի պատերազմում, հետեւաբար կողմերին միակողմանի պարտադրել ինչ-որ բան հնարավոր չէ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ

«Կարեւոր ու բովանդակալից հանդիպում ունեցա Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության մարդու իրավունքների բաժնի ղեկավար Լուիզա Ռազերի, ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարի՝ քաղաքական գծով խորհրդական Օգնյան Կարապետյանի հետ:

Գործընկերներիս ներկայացրի Հայաստանում եւ Արցախում առկա իրավիճակը՝ շեշտելով Ադրբեջանի կողմից մարդկանց՝ միջազգային կոնվենցիաներով ամրագրված կենսական իրավունքների շարունակ խախտումների մասին»,- հայտնել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Ընդգծեցի, որ Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետեւանքով 120 հազար հայ 21-րդ դարում Արցախում ապրում է պատանդի կարգավիճակում՝ զրկված լինելով աշխարհի հետ կապից, էլեկտրաէներգիայի եւ գազի, սննդի եւ կենսական անհրաժեշտության պարագաների բավարար մատակարարումից, ինչի հետեւանքով արցախահայությունը հայտնվել է հումանիտար աղետում: Ադրբեջանը, ի թիվս այլ հանցագործությունների, ապօրինաբար անցակետ է տեղադրել Լաչինի միջանցքում, ինչը հայկական կողմի համար անընդունելի է:

Պատմեցի, թե ինչպես վարդենիսցին չի կարողանում գնալ աշխատանքի Սոթքի հանքավայրում, քանի որ ադրբեջանցիները կրակում են խաղաղ բնակավայրերի ուղղությամբ, ինչպես Տեղ գյուղի ու ընդհանրապես Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերի սահմանամերձ բնակիչները հնարավորություն չունեն անասնապահությամբ զբաղվելու, քանի որ արոտավայրերն օկուպացվել են Ադրբեջանի կողմից:

Խոսեցի նաեւ Հայաստանում առկա ժողովրդավարական իրավիճակի մասին՝ մատնանշելով երկրում մարդկանց շարունակ խախտվող իրավունքները: Նշեցի, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, որը բոլորովին այլ խոստումներով եկավ իշխանության, ամենօրյա ռեժիմով խաբում է բոլորին՝ անելով այն, ինչ նախկինում քննադատում էր»,- եզրափակում է պատգամավորը:

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ

Հայաստանում զանգվածային լրատվության միջոցների ինքնակարգավորման մեխանիզմներ ներդնելու քայլերը շարունակվում են: Ինքնակարգավորման միջոցով տարբեր երկրներում ստեղծվել են ինքնակարգավորման մարմիններ, որոնք պետք է կարգավորեն մասնագիտական խնդիրները, քննարկեն ընթերցողների կամ հեռուստադիտողների բողոքները, որպեսզի կարողանան առկա հարցերը լուծել արտադատական տարբերակով: Ինքնակարգավորման միջոցով պետք է խթանվի նաեւ էթիկայի կանոնների պահպանմամբ լրագրողական գործունեություն սահմանելը: Ինքնակարգավորման մարմին է հանդիսանում նաեւ օմբունդսմենի ինստիտուտը, որը եւս պետք է պաշտպանի ընթերցողների շահերը եւ գործում է նաեւ եվրոպական երկրներում:

Հայաստանի լրատվական դաշտում եւս ինքնակարգավորման մեխանիզմի փորձ է առկա: 2007 թվականի մարտի 10-ից գործում է ՁԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը, սակայն այս մարմինը չունի իրավական կարգավիճակ, ճանաչված չէ, հետեւաբար գործունեության ընթացքում կարող է խոչընդոտների հանդիպել:

Այժմ նոր հայեցակարգ է մշակվում, որով առաջարկվում է ինքնակարգավորման համակարգը ներդնել կամավորության սկզբունքով: Այն պետք է ճանաչվի նաեւ պետության կողմից: Այժմ նաեւ քննարկումներ են ընթանում, թե ինչ մեխանիզմներով այն իրականացնել, որպեսզի չվնասի լրատվամիջոցներին, նպաստի դրանց զարգացմանը: Մյուս խնդիրը, որի շուրջ քննարկումներ են առկա, օրենքով լրագրողի սահմանում տալն է: Մասնավորապես, կարեւոր հարց է՝ օրենքում սահմանե՞լ, թե ով է լրագրողը, թե՞ տալ միայն ոլորտի սահմանումը: Այստեղ նկատենք, որ եվրոպական մի քանի երկրներում լրագրողական կազմակերպության կողմից տրված վկայականը բավարար է լրագրող լինելու համար:

Նոր հայեցակարգում «Զանգվածային լրատվամիջոց» բառակապակցությունը փոխվել է, ընդունելի տարբերակ է համարվել «հանրության իրազեկման միջոցը»: Այստեղ հանրությանը իրազեկելու միջոց է համարվում այն իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը զբաղվում է հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական, մարզական եւ/կամ հանրային այլ նշանակություն ունեցող տեքստային, լուսանկարային, ձայնային եւ տեսողական տեղեկությունների պարբերական հավաքմամբ, մշակմամբ եւ տարածմամբ: Այս դեպքում պետք է կիրառվի ինքնակարգավորման առնվազն մեկ մեխանիզմ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿՀԱՆԴԻՊԵՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները, ըստ նախնական պայմանավորվածության, պետք է հանդիպեն նաեւ Մոսկվայում: Այդ մասին նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել, սակայն ժամկետների մասին տեղեկություններ առկա չեն:

Ավելի վաղ Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտնել էր, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպման պայմանավորվածություն է ձեռք բերվել, որը կկայանա Մոսկվայում: Այս օրերին ԱՄՆ-ում բանակցություններ են արտաքին գործերի նախարարների մակարդակով:

ԱՄՆ-ի ներգրավվածության հանգամանքը քննադատվել էր ՌԴ կողմից, եւ Զախարովայի կողմից շեշտվել էր այն հանգամանքը, որ իրենք եւս պատրաստ են ընդունել երկու կողմերին: Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գերատեսչությունների ղեկավարների երեկ մեկնարկած բանակցությունները մի քանի օր կտեւեն. նրանք մի քանի տարբեր հանդիպումներ կունենան շաբաթվա ընթացքում: Նպատակը, ինչպես նշում են ամերիկացի դիվանագետները, խաղաղության երկարատեւ հեռանկարն է:

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ ԿՄԵԿՆԵՆ ԹՈՒՐՔԻԱ

Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատվիրակությունը կմեկնի Թուրքիա՝ մասնակցելու Սեւծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի աշխատանքներին:

Ազգային ժողովի նիստում Բաբկեն Թունյանը, անդրադառնալով «Հայաստան» խմբակցությունից Գեղամ Մանուկյանի հարցին, թե ինչու է ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը մասնակցում Վաշինգտոնում ընթացող բանակցություններին, ասաց. «Վաղը չէ մյուս օրը մենք սեւծովյան պատվիրակության անդամներով մեկնում ենք Թուրքիա, Անկարա, որտեղ բավականին բարդ օրակարգ է մեզ սպասվում: Եվ այդ պատվիրակության անդամ եք նաեւ Դուք: Դուք հարցնում եք, թե Ռուբեն Ռուբինյանն ինչու է գնում, ես էլ ասում եմ՝ Դուք ինչո՞ւ չեք գալիս: Շատ լավ ամբիոն էր. գայիք, Ձեր բոլոր մտահոգությունների մասին բարձրաձայնեիք, լիքը խնդիրներ կան, օգնեիք, որ մենք մեր տեսակետը տանեինք առաջ: Սա ուղիղ վերաբերում է Ձեր պարտականություններին»:

Թունյանը նշեց՝ Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը շատ բարդ կազմակերպություն է՝ շատ բարդ օրակարգով, եւ լիքը լուծելու հարց կա:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանն էլ կոչ արեց Գեղամ Մանուկյանին միանալ իրենց ու գնալ Թուրքիա:

ՕՐՆ Է

ՆԱԽԿԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ՝ ԸՆԴԴԵՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

Այսօր Մամուլի ազատության օրն է: 1994-ից սկսած՝ ամեն տարի՝ մայիսի 3-ին, նշվում է Մամուլի ազատության համաշխարհային օրը: Այս տոնը նախաձեռնել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովը, իսկ 1993-ի դեկտեմբերի 20-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան այն տոն է հռչակել: Այս տոնը նշվում է նաեւ Հայաստանում:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է»:

Սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ 2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո ազատ մամուլի հանդեպ ճնշումներն ու անհանդուրժողական մթնոլորտն ավելացել է, եւ սա՝ այն դեպքում, երբ երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախկին լրագրող է, ընդդիմադիր թերթի խմբագիր է եղել: Սա չի խանգարել, որպեսզի հենց նրա իշխանության օրոք սկսեն ոտնահարվել լրագրողների իրավունքները, ու մամուլի ճնշման համար մեծ թվով օրենսդրական նախաձեռնություններ կյանքի կոչվեն:

Խոսքի ազատության դեմ իրականացվող քայլերի մասին նաեւ միջազգային կառույցներն են բարձրաձայնել: Ընդ որում, լրատվամիջոցներին առնչվող ամենավատ օրինագծերի հեղինակները նախկին լրագրողներ են: Անգամ լրագրողական կազմակերպությունների դիտարկումով՝ վերջին տարիներին մեդիային առնչվող օրենսդրական փոփոխությունները ռեգրեսիվ բնույթ են կրում: Հեղինակավոր Amnesty International իրավապաշտպան կազմակերպության տարեկան վերջին զեկույցում եւս նշվել էր, որ Հայաստանում խոսքի ազատությունը շարունակում է սահմանափակված մնալ իշխանությունների ջանքերով: Մասնավորապես, 2022 թվականի գարնանն Ազգային ժողովը վիրավորանքի ու զրպարտության համար նախատեսված տուգանքի վերին շեմը բարձրացրեց: Ավելի ուշ օրենսդրական փոփոխությունների մեկ այլ փաթեթով խորհրդարանը քրեականացրեց հանրային դեմքերին վիրավորանք հասցնելը: Ալեն Սիմոնյանի՝ Ազգային ժողովի նախագահ ընտրվելուց հետո էլ խորհրդարանում սահմանափակվեց լրագրողների աշխատանքը լիագումար նիստերի օրերին:

Freedoշ House-ի զեկույցի համաձայն՝ Հայաստանը 55 միավորով, ինչպես եւ նախկիններ ի ժամանակ, շարունակում է մնալ «մասնակի ազատ» երկիր: Արձանագրվել են լրագրողների նկատմամբ 20-ից ավել բռնության դեպքեր. բողոքի ակցիաների ժամանակ բռնությունների են ենթարկվել հասարակական գործիչներ, քաղաքացիներ եւ լրագրողներ:

Իսկ այժմ անդրադառնանք Նիկոլ Փաշինյանի մի քանի որակումներին՝ արված լրագրողների հարցերին: 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ Նիկոլ Փաշինյանը քարոզարշավի ընթացքում բազմիցս աչքի է ընկել ատելության խոսքով եւ սպառնալիքներով: Քաղաքական գործիչների նկատմամբ սպառնալիքներ հնչեցնելուց զատ, Նիկոլ Փաշինյանը սպառնում եւ վիրավորում էր նաեւ լրագրողներին եւ լրատվականներին: «Այսօր Հայաստանի լրատվական դաշտը, կներեք արտահայտությանս, վերածվել է իսկական աղբանոցի»,- քարոզարշավի ընթացքում ասել է Նիկոլ Փաշինյանը: Իսկ 2020 թվականի փետրվարի 20-ին Փաշինյանը հայտարարել էր. «Լրատվամիջոցների 99%-ը եւ լրագրողների 70%-ն իշխանություններից փող են ստացել»: Այս տարի, խոսելով լրագրողների աշխատելաոճի մասին, Փաշինյանը նշել էր, որ իրեն զարմացնում է՝ ինչպես է լրագրողների «պարսը» հետապնդում ԱԺ պատգամավորին:

Ահա թե ինչպես է փոխվել լրագրողի իշխանությունը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱԴԱԴԱՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմն Արցախում հրադադարի ռեժիմի խախտման մեկ դեպք է արձանագրել մայիսի 1-ին. այս մասին հայտնում է ՌԴ պաշտպանության նախարարությունը՝ներկայացնելով Արցախում ՌԴ խաղաղապահ զորակազմի գործունեության մասին ամենօրյա տեղեկագիրը:

Տեղեկագրում նշվում է, որ հրադադարի ռեժիմի խախտում է արձանագրվել Ասկերանի շրջանում. տուժածներ չկան: «Ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը ադրբեջանական եւ հայկական կողմերի հետ հետաքննություն է անցկացնում փաստի առնչությամբ»,- ասված է տեղեկագրում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 1-ին Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը հանդիպել է Վրաստանի ֆինանսների նախարարության Եկամուտների ծառայության ղեկավար Լեւան Կակավայի հետ:

Վրաստանում ՀՀ դեսպանությունից հայտնում են, որ հանդիպմանը կողմերն անդրադարձել են Վրաստանի տարածքով իրականացվող բեռնափոխադրումներին վերաբերող մի շարք ընթացիկ հարցերի: Կարեւորվել է Հայաստանի եւ Վրաստանի մաքսային ծառայությունների միջեւ առկա բազմաշերտ համագործակցության հետագա խորացումն ու ընդլայնումը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Թուրքմենստանը կստեղծի ԱՄՆ-ի հետ 2023-24թթ. համագործակցության ճանապարհային քարտեզ եւ երկու երկրների միջեւ այցելությունների կազմակերպման շրջանակային պլան. տեղեկացրել է կառավարության Неутральный Туркменистан ռուսալեզու թերթը:

«Նախագահ Սերդար Բերդիմուհամեդովին են ներկայացվել առաջարկներ 2023-24թթ. համագործակցության ճանապարհային քարտեզի ստեղծման մասին Թուրքմենստանի եւ ԱՄՆ-ի միջեւ գործընկերությունն ակտիվացնելու նպատակով, ինչպես նաեւ Թուրքմենստանի եւ ԱՄՆ-ի միջեւ տարբեր մակարդակների այցելությունների կազմակերպման շրջանակային պլանը»,- նշվել է հաղորդագրությունում:

Հավանություն տալով այդ առաջարկներին՝ Թուրքմենստանի ղեկավարը նշել է Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ միջպետական երկխոսության ավանդական բարեկամական բնույթը, որը վերջին տարիներին նոր լիցք է ստացել:

«Նշելով բազմամյա փոխգործակցության պատկառելի փորձի եւ դրա հետագա զարգացման համար ազդեցիկ պոտենցիալի առկայությունը՝ նախագահ Սերդար Բերդիմուհամեդովը հանձնարարել է շարունակել համապատասխան աշխատանքն այդ ուղղությամբ»,- ընդգծել է պարբերականը:

ՊԱՏՐԱՍՏ Է

ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՉՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանն առաջարկեց 44-օրյա պատերազմի հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը եւս 6 ամսով երկարաձգել:

Քոչարյանն ասաց, որ քննիչ հանձնաժողովն աշխատանքի ընթացքում պահանջել եւ ստացել է 4 հազար 154 գաղտնի եւ հույժ գաղտնի տեքստային եւ գրաֆիկական փաստաթուղթ՝ 14 հազար էջից ավելի ծավալով: Նա նշեց, որ այդ փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությունը շարունակվում է:

«Որոշվել է հրավիրյալների ցանկը, որի հիման վրա հրավիրվել են եւ հրավիրվում են գործող եւ նախկին զինվորական ու քաղաքական բարձրաստիճան պաշտոնյաներ: Հանձնաժողովին են դիմել պատերազմի բազմաթիվ մասնակիցներ եւ զոհվածների հարազատներ, որոնք նույնպես անհատական կարգով հանձնաժողովին են ներկայացնում բազմաթիվ տեղեկություններ եւ տեսաձայնային նյութեր:

Վերը նշված լսումների եւ զրույցների ընթացքում ստացված տեղեկությունների արդյունքում անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ ուսումնասիրման նպատակով դիմել համապատասխան կառույցներին եւ ստանալ փաստաթղթերի նոր քանակ: Հրավիրյալների լսումները շարունակելու եւ փաստաթղթերի նոր ծավալը ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հանձնաժողովի աշխատանքների հաջորդ փուլը, որի համար խիստ անհրաժեշտ է հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել եւս 6 ամսով»,- ասաց Քոչարյանը, որը հանդիսանում է տվյալ հանձնաժողովի նախագահը: Պատգամավորը վստահեցրեց, որ սա վերջին երկարաձգումը կլինի, եւ քննիչ հանձնաժողովը այդ որոշումն արդեն իսկ հաստատել է:

Անդրանիկ Քոչարյանը հայտնեց, որ շատ քիչ մարդիկ են եղել, որոնք հրաժարվել են ներկայանալ 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող հանձնաժողովի նիստին, սակայն ապագայում նման դեպքերը բացառելու համար հանդես են գալու օրենսդրական նախաձեռնությամբ: Ազգային ժողովի հերթական նիստի ժամանակ Քոչարյանն ասաց, որ նախատեսում են խստացնել եւ պատասխանատվության ենթարկել ՀՀ ԱԺ քննիչ հանձնաժողովի նիստին չներկայանալու կամ տեղեկություն չհայտնելու համար:

«Ընդդիմությունը առանձին զրույցներում դրական է տրամադրված եղել, երբ մենք որոշել էինք «ԱԺ կանոնակարգ» օրենքում փոփոխություններ կատարել եւ խստացնել քննիչ հանձաժողով չներկայանալը: Ասեմ, որ շատ քիչ մարդիկ են եղել, որոնք, չգիտես ինչու, մերժել են եւ չեն ներկայացել, բայց համոզված եմ, որ գալու են՝ լինի արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանը, զինված ուժերի շտաբի պետի տեղակալ Տիրան Խաչատրյանը, թե զինված ուժերի նախկին գլխավոր շտաբի պետ Մովսես Հակոբյանը: Եթե չգան, նշանակում է, որ իրենք խուսափում են մի բանից, որ չօգտվել այս հնարավորությունից պարզապես անհնար է պատկերացրել»,- ընդգծեց Քոչարյանը:

ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի խոսքով՝ «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքում եւ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագիծը պատրաստ է եւ շուտով կներկայացվի Ազգային ժողովի քննարկմանը:

«Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Խաչատրյանը կներկայացնի այդ նախաձեռնությունը, եւ ապագայի համար այս գործիքը պետք է գալու»,- եզրափակեց Քոչարյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Հաշվեքննիչ պալատն ուսումնասիրություններ է կատարել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում Ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային եւ վարկային ծրագրերի նկատմամբ համապատասխանության վերաբերյալ: Ըստ այդմ, արձանագրվել է, որ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Վանաձոր-Ալավերդի-Վրաստան միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման եւ բարելավման ծրագրի շրջանակներում 19 մլրդ 36 մլն դրամ գումարի կապիտալ ծախսումները չեն ավելացվել ասֆալտբետոնյա ճանապարհների հաշվեկշռային արժեքին. դրանով խախտվել է պարտադիր պահանջի կատարումը:

Նույն ուսումնասիրության արդյունքներով՝ այդ ծրագրի շրջանակներում 6 մլրդ 171 մլն դրամի ասֆալտբետոնյա ծածկույթի վերին շերտի աշխատանքներն ընդունվել եւ վճարվել են առանց ավտոմոբիլի անիվի կառճումը ծածկից կամ ծածկի անողորկությունը ստուգելու: Այլ խնդիրներ եւս առկա են:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀՐԴԵՀ Է ԲՌՆԿՎԵԼ

Մայիսի 2-ին հրկիզման միջոցով գույքի դիտավորյալ ոչնչացման դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում. ժամը 03:25-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 911 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Բալահովիտ գյուղում գործող «Միուբ» մարկետում հրդեհ է բռնկվել:

Shamshyan.com-ի հաղորդմամբ՝ հրշեջները մարել են խանութի մուտքի ներսի հատվածում բռնկված հրդեհը, ինչի շնորհիվ կանխվել է կրակի տարածումը: Ու եթե հրշեջները օպերատիվ չգործեին, խանութի ողջ գույքը վերածվելու էր մոխրակույտի:

Ըստ նախնական տեղեկությունների՝ տեղի է ունեցել դիտավորյալ հրկիզում, քանի որ դեպքի վայրում հայտնաբերվել է երկաթե ձող, որով կոտրել են խանութի մուտքի դռան ապակին, ապա դիզվառելիք են լցրել ներս, փայտի ծայրին ամրացված կտորը վառել ու կրակը նետել են խանութի ներս: Երջանիկ պատահականությամբ այդ պահին կրակը տեսել է քաղաքացին, որն ահազանգել է 911:

ՎԹԱՐՆԵՐ՝ ՓՈՇԵՓՈԹՈՐԿԻՑ

ԱՄՆ-ի Իլլինոյսի նահանգում փոթորիկը փոշու ամպեր է բարձրացրել եւ տասնյակ ավտովթարների պատճառ դարձել, որոնց հետեւանքով առնվազն վեց մարդ է զոհվել, տասնյակ մարդիկ՝ վիրավորվել:

Ոստիկանության տվյալներով՝ ճանապարհատրանսպորտային պատահարների են ենթարկվել 40-ից 60 ավտոմեքենաներ եւ մի քանի քարշակներ, որոնցից երկուսը այրվել են:

«Առնվազն վեց մարդ է զոհվել, բոլորը՝ դեպի հյուսիս տանող ճանապարհներին, իսկ ավելի քան 30 մարդ վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց», - նշել են իրավապահները:

Վթարների պատճառը եղել է սաստիկ քամին, որը փոշի է բարձրացրել գյուղատնտեսական հողատարածություններից եւ հանգեցրել զրոյական տեսանելիության:

«Միակ բանը, որ կարող էինք լսել, երբ մեզ հարվածեցին, այն էր, որ մեր հետեւում մեկը մյուսի հետեւից մեքենաներ էին բախվում իրար», - ասել է Թոմ Թոմասը, որը մեկնում էր դեպի Սենթ Լյուիս:

Ազգային օդերեւութաբանական ծառայության տվյալներով՝ փոթորկի ժամանակ քամու արագությունը տատանվել է ժամում 56-ից մինչեւ 74 կիլոմետր:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 28-ից մայիսի 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 197 դեպք, որոնցից 12-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՈՒՄ ՆԱԽԱԳԾԻՆ

Կառավարությունը ապրիլի 27-ի նիստում հավանություն է տվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին: Դրանով ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթեւեկելի մասով եւ բաժանարար գոտիով անասուններ քշելու, ճանապարհի պաշտպանական գոտում առանց մշտական հսկողության անասուն արածեցնելու համար տուգանքի չափը նախատեսվում է սահմանել նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով: Տավուշի մարզի շատ բնակավայրեր գտնվում են միջպետական կամ հանրապետական ավտոճանապարհներին, գյուղի կենտրոնով երկար ձգվում է հիմնական ճանապարհը, որտեղով գյուղի անասուններն առավոտյան արոտավայր են տանում, երեկոյան արոտավայրից բերում. անասուններն այլ կերպ չեն կարող արոտավայր տանել-բերել: Ամեն տարի գարնանը գյուղերից անասունները սարերն են քշում, աշնանը՝սարերից իջեցնում, անասունները գյուղերի մեջի ճանապահներով են տանում: Տավուշի մարզի բնակիչներ կան, որոնք կարծում են, որ օրենքի նախագիծը թերություններ ունի նաեւ այն առումով, որ դրանով տուգանք նախատեսված չէ գյուղերում, դրանց հարակից տարածքներում առանց հսկողության թողնված, այլոց ցանքատարածությունները, այգիները վնասած, նաեւ բնակավայրերի տարածքում հակահիգիենիկ, հակասանիտարական վիճակ ստեղծած անասունների տերերի նկատմամբ:

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՏԽՈՒՐ ԴՊՐՈՑԸ

Նոյեմբերյան համայնքի հեռավոր, սահմանամերձ Բարեկամավան գյուղի միջնակարգ դպրոցի շենքի տանիքում արդեն երրորդ տարին է, որ բաց տեղեր կան, անձրեւները լցվում են շինության ներս՝ վնասելով պատերը: ՌԴ Ստավրոպոլ քաղաքում բնակվող բարեկամավանցիները գումարներ էին հանգանակել հայրենի գյուղի դպրոցի շենքը նորոգելու համար: Տավուշի մարզպետ (այժմ՝ նախկին) Հայկ Չոբանյանը դպրոցի նորոգման համար պահանջվող գումարի չափը քիչ էր նշել՝ 8,5 միլիոն դրամ, այդ պատճառով Ստավրոպոլում բնակվող բարեկամավանցիների հանգանակած 8,5 միլիոն դրամը բավարար չեղավ դպրոցի տանիքի նորոգումն ավարտելու համար: Այժմ Բարեկամավանի դպրոցում բավարար շինանյութ կա տանիքի նորոգումն ավարտելու համար, սակայն նորոգող բանվորներին վճարելու գումար չկա: Բարեկամավանի դպրոցի երկարամյա տնօրեն Ատղիկ Ազատյանից տեղեկացա, որ դպրոցն ընդամենը 14 աշակերտ ունի, չկան 2-րդ, 4-րդ, 6-դ, 7-րդ , 10 -րդ եւ 12-րդ դասարաններ. աշնանը այդ դպրոց է հաճախելու մեկ առաջին դասարանցի, սակայն մտավախություն կա, որ մինչ նոր ուսումնական տարվա մեկնարկը դպրոցի 14 աշակերտներից ոմանք կարող են իրենց ընտանիքներով հեռանալ սահմանամերձ գյուղից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ԿԲԱՐՁՐԱՆԱ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Պաշտպանության նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N 1085-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի համաձայն՝ նախատեսվում է ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների ամսական դրամական ապահովության չափը սահմանել օրենքով սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի չափով եւ առաջադիմության համար՝ 50 000 դրամ չափով:

Որոշման նախագծի հիմնավորման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների համար սահմանված ամսական դրամական ապահովության չափերը բավականին ցածր են՝ հաշվի առնելով, որ խոսքը գնում է ապագա սպաների մասին, որոնց ուսումնառության պատշաճ կազմակերպման, արժանապատիվ կեցության ապահովման հանգամանքը էական նշանակություն ունի սպայի կերպարի ձեւավորման, զինվորական ծառայության ընտրության նկատմամբ վստահության եւ գրավչության գործընթացի համար:

Ներկայումս կուրսանտների համար գործող դրամական ապահովության ցածր չափերն իրենց ազդեցությունն են թողնում նաեւ 17-18 տարեկան պատանիների կողմից կադրային զինվորական ծառայության ընտրության որոշման վրա՝ նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ, օրինակ, ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողների վարձատրությունը, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն, նախատեսված է նվազագույն ամսական աշխատավարձի չափով: Բացի այդ, Կառավարության ծրագրային քաղաքականությունն ուղղված է ռազմական կրթության որակի, զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը, զինծառայողների վարձատրության եւ սոցիալական երաշխիքների ծավալների ավելացմանը, որի դրսեւորումներից էր նաեւ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած եւ ՀՀ զինված ուժերում կամ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպաների համար 2022 թվականին օրենքով սահմանված բնակարանային ապահովության նոր իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների ամսական դրամական ապահովության չափը եւս նախատեսել ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողների վարձատրության չափով՝ ամսական դրամական ապահովության հաշվարկում պահպանելով նաեւ առաջադիմության համար սահմանված բաղադրատարրը, միաժամանակ գործող 10.000 դրամ չափը սահմանելով 50.000 դրամ:

Նախատեսվում է առաջարկվող ամսական դրամական ապահովությունը կիրառել 2023թ. սեպտեմբերի 1-ից:

Որոշման նախագծի ընդունումը 2023 թվականի եւ հետագա տարիների պետական բյուջեներում հանգեցնում է լրացուցիչ միջոցների անհրաժեշտության. հաշվի առնելով 2023թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների, ինչպես նաեւ յուրաքանչյուր տարվա համար ՀՀ կառավարության որոշմամբ ՌՈՒՀ-երի ընդունելությանը հատկացվող տեղերի քանակը՝ տարեկան կտրվածքով լրացուցիչ միջոցների չափը կարող է կազմել մինչեւ 2,463,877.50 հազ. դրամ, որն իրականացվելու է պետական բյուջեով Պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

ՆԻՍՏ

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթեւիկ Ստեփանյանի նախագահությամբ տեղի է ունեցել տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի ընդլայնված նիստ, որին մասնակցել են շահագրգիռ գերատեսչությունների եւ ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից հայտնում են, որ նիստի օրակարգում մշակվող ժողովրդագրության ռազմավարության մեջ տարեց անձանց դերակատարումն ու նրանց ներուժի օգտագործման հնարավորությունների, ինչպես նաեւ տարեց եւ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական չափաքանակների ներկայացումն էր 2024-2026 թթ. ՄԺԾԾ հայտի համատեքստում:

Նախարարի տեղակալը, ընդգծելով տարեցների առողջ ապրելակերպի եւ ակտիվ ծերացմանն ուղղված ծրագրերի կարեւորությունը, նշել է, որ նախարարության կողմից մշակվում են ոլորտային ռազմավարություններ, այդ թվում՝ ժողովրդագրության ռազմավարությունը, որտեղ կառուցվածքային փոփոխություններին զուգընթաց իրականացվելու են նաեւ բովանդակային փոփոխություններ: Տաթեւիկ Ստեփանյանի խոսքով՝ մեր երկիրը դասվում է ծերացող երկրների շարքին, ուստի անհրաժեշտ է վերափոխել տարեցների ոլորտում իրականացվող քաղաքականությունը, նրանց տրամադրել ոչ միայն որակյալ ծառայություններ, այլեւ ստեղծել հարթակներ՝ինքնաարտահայտվելու, կրթվելու եւ փորձառությունը կիսելու:

Նիստի շրջանակում մասնակիցներին ներկայացվել է նոր ժողովրդագրության ռազմավարությունը. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչը խոսել է առկա իրավիճակի, ծնելիության ցուցանիշների, նախատեսվող քայլերի մասին:

Նախարարության հավասար հնարավորությունների վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Հայկ Հարությունյանը նիստի անդամներին ներկայացրել է ՀՀ սոցիալական պաշտպանության բնագավառի՝տարեց ու հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների մատուցման միջնաժամկետ ծախսային ծրագրի 2024-2026 թթ. հայտը: Վերջինս մանրամասնել է ակտիվ ու առողջ ծերացման խրախուսման, խնամքի համայնքահեն ծառայությունների ներդրման, տարեցների հասարակություն լիարժեք ներառման, նրանց կյանքի որակի բարձրացման, ընտանիքում եւ համայնքում ապրելու համար բարենպաստ միջավայրի ու արժանապատիվ պայմանների ստեղծման ու իրենց գնահատված անհատական կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման մասին:

Հարց ու պատասխան ձեւաչափով նիստի անդամները քննարկել են նաեւ տարեցների ոլորտում առկա խնդիրները, ներկայացրել են իրենց դիտարկումներն ու առաջարկները:

● *Անցած 4 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 47 ճՏՊ. 5 մարդ զոհվել է, 58-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ԻՑ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԳԱՎԱՌ», «ԱՐԻՆ ԲԵՐԴ» ԵՎ «ՆՈՐԱԳԱՎԻԹ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի խորհրդի 20.03.2023թ., 31.03.2023թ. եւ 11.04.2023թ. որոշումների եւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի՝ 26.04.2023թ. թիվ 1/212 Ա որոշման համաձայն՝ 01.06.2023թ.-ից կդադարեցվի բանկի «Գավառ» /հասցե՝ ք. Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսիյսկի փողոց N11/ եւ «Արին Բերդ» /հասցե՝ք. Երեւան, Տիտոգրադյան 2/1/, իսկ 15.06.2023թ.-ից՝ «Նորագավիթ» /ք.Երեւան, Արշակունյաց պողոտա 73/5/ մասնաճյուղերի գործունեությունը:

«Գավառ», «Արին Բերդ» եւ «Նորագավիթ» մասնաճյուղերի ակտիվները եւ պարտավորությունները կփոխանցվեն համապատասխանաբար բանկի «Սեւան» /հասցե՝ ք. Խեւան, Նաիրյան փ.163/, «Էրեբունի» /հասցե՝ Երեւան, Էրեբունու փ.20, 50 / եւ «Հայրենիք» /հասցե՝ ք. Երեւան, Գարեգին Նժդեհ 34, 4/1/ մասնաճյուղերին:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝+374 10 59 55 55 :

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

««Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» եւ ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է վարչարարության կրճատման, պարզեցման, ծանուցման ենթակա մի շարք ոլորտներին աջակցելու, գործարար եւ ներդրումային միջավայրի տեսանկյունից տվյալ ոլորտներն առավել գրավիչ դարձնելու հանգամանքով: Նախագիծը ներկայացվել է ԱԺ նիստում:

Ծանուցման ենթակա թորած ալկոհոլային խմիչքների արտադրության գործունեության տեսակները տարանջատելու, հստակեցնելու եւ ալկոհոլային խմիչքների առանձին տեսակների արտադրությունը խթանելու նպատակով դրանց արտադրության գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար առաջարկվել է նաեւ տարեկան սահմանել պետական տուրքերի առավել մատչելի դրույքաչափեր:

Հիմնական զեկուցող, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Անի Իսպիրյանը տեղեկացրել է, որ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում կատարվել են տեխնիկական բնույթի փոփոխություններ: Հարակից զեկուցող, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Դավիթ Առուշանյանը հավելել է, որ փոփոխությունները միտված են էականորեն բարելավելու միջին եւ փոքր բիզնեսի գործունեությունը՝ զերծ պահելով ավելորդ թղթաբանական քաշքշուկներից:

ԿԲ ԹԻՐԱԽ

ԳՆԱՃԸ ԼԻՆԵԼՈՒ Է ԹԻՐԱԽԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ

Համաշխարհային դարենային ապրանքների գների նվազման արդյունքում Հայաստանի ապրանքների գնանկում է նկատվում: Կենտրոնական բանկի գնահատմամբ՝ սա նույնիսկ կարող է բերել նրան, որ որոշ ժամանակ անց գնաճն ավելի ցածր լինի, քան ԿԲ թիրախն է (4 տոկոս): Այս մասին ասուլիսում ասաց ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը:

«Ինչպես աշխարհի շատ երկրներում, Հայաստանում եւս նկատում ենք մի ֆենոմեն, երբ կա ապրանքների որոշակի էական գնանկում, որը հիմնականում պայմանավորված է, մի կողմից, վարվող խիստ դրամավարակային քաղաքականությամբ, մյուս կողմից՝ կորոնավիրուսից հետո վերջապես արժեշղթաների վերականգնմամբ ու առաջարկի ավելացման գործոններով: Այդ առումով թե՛ ԱՄՆ-ում, թե՛ եվրոպական երկրներում, թե՛ ՌԴ-ում, թե՛ Հայաստանում տեսնում ենք, որ համաշխարհային պարենային ապրանքների գների նվազման արդյունքում մեր գնաճի զամբյուղի մեջ էական կշիռ ունեցող ապրանքների գները որոշակիորեն նվազման միտում են ցույց տալիս»,- ասաց Գալստյանը:

Անդրադառնալով ծառայությունների հատվածին՝ ԿԲ նախագահն ասաց, որ մի քանի զարգացումներ կան, որոնք դեռեւս թույլ չեն տալիս ասել, որ գնաճի դեմ պայքարը վերջնականապես հաղթահարվել է: «Առաջինը, արտաքին պահանջարկով պայմանավորված, ծառայությունների գների հետեւողական աճն է Հայաստանում: Ապրանքների պարագայում մենք տեսնում ենք, որ ունենք բավականին մեծ գնանկումներ. սա որոշ ժամանակ անց՝ շատ կարճաժամկետում նույնիսկ բերելու է նրան, որ Հայաստանում, մեր գնահատականներով, ընդհանուր գնաճը լինելու է ավելի ցածր, քան ԿԲ-ի թիրախը: Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք, որ ծառայությունների ոլորտում գնաճն ավելի բարձր է, քան մեր թիրախը: Մենք ամսական արտահայտությամբ՝6-8 տոկոս, տարեկան արտահայտությամբ նաեւ 12 տոկոս գնաճ ունենք որոշակի ծառայությունների մասով»,- ասաց Գալստյանը:

Ծառայությունների գների աճը մի մասով նա պայմանավորեց արտաքին շատ ուժեղ պահանջարկով, նաեւ երկրում աշխավարձերի աճով: ԿԲ նախագահի խոսքով՝ աշխատավարձերի աճը գերազանցում է ոչ միայն ՀՆԱ-ի իրական աճի տեմպերը, այլ նաեւ արտադրողականությանը, ինչն ունի գնաճային էական պոտենցիալ:

Թեեւ գնաճային սպասումները որոշակիորեն նվազել են անցած տարի նկատված մակարդակներից, սակայն շարունակում են մնալ բավականին բարձր՝ այն տարիների նկատմամբ, երբ հնարավոր էր վստահորեն ասել, որ կան խարխսված գնաճային սպասումներ: Ուստի ԿԲ խորհուրդը որոշել է այս անգամ եւս վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ:

«ԿԲ-ն պայքարելու ու ստեղծելու է մի իրավիճակ, որ միջնաժամկետ հատվածում Հայաստանում գնաճը լինելու է թիրախին համարժեք»,- ընդգծեց Գալստյանը:

2023-ի մարտին 12-ամսյա գնաճը կտրուկ նվազել է եւ ամսվա վերջին կազմել 5.4 տոկոս, 12-ամսյա բնականոն գնաճը եւս զգալիորեն նվազել է՝ կազմելով 6.4 տոկոս:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԽՆԴԻՐԸ՝ ՕՐՀԱՍԱԿԱՆ

Սեւանա լճի ծաղկման խնդիրն օրհասական է, եւ այն լուծելու առաջնային դայմանը կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրումն ու գործարկումն է: Դա հնարավորություն կտա մաքրել կոյուղաջրերն ու կեղտաջրերը, որոնք տվյալ համայնքի վերջնարդյունքում լցվում են լիճ: Սեւանա լիճը ծանրաբեռնված է մարդու գործունեության հետեւանքով առաջացած կենսանյութերով, եւ կեղտաջրերի դաստաճ մաքրումը եւս շատ կարեւոր է:

2013թ.-ից ի վեր Սեւանա լճին հարակից համայնքներից կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայաններ գործում են Գավառ, Մարտունի եւ Վարդենիս համայնքներում, որոնք սակայն ամբողջությամբ կոյուղացված չեն:

Եվրոպական միության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող «Սեւանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» (EU4SEVAN) ծրագրի շրջանակում պլանավորվում է իրականացնել Գավառի մեխանիկական մաքրման կայանի վերազինում եւ արդիականացում: Արդյունքում ծրագրի ավարտին պլանավորվում է կառուցել Գավառի մեխանիկական մաքրման կայանին կից երկրորդ մեխանիկական կայանը: Այս կերպ հնարավորություն կընձեռնվի գետերը թափվելուց առաջ բավարարաչափ մաքրել կոյուղաջրերն ու կեղտաջրերը, որոնք տվյալ համայնից վերջնարդյունքում լցվում են լիճ:

EU4Sevan ծրագիրն իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից, իսկ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 5,7 միլիոն եվրո:

Ծրագրի շրջանակում տեղի է ունեցել կեղտաջրերի կառավարման վերաբերյալ ազգային երկխոսության հաստատում, որը կբարելավի կարիքների ընդհանուր ըմբռնումը եւ կընձեռի անհրաժեշտ քայլերը Հայաստանում ոլորտի զարգացման բարելավման համար:

Այսօր կոյուղաջրերի ամբողջ ծավալը անխափան հոսում է լիճ, ինչը հանգեցնում է լուրջ բնապահպանական խնդիրների:

2021 թ. օգոստոսից մինչեւ 2022 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում գերմանական խորհրդատվական ընկերության միջազգային եւ ազգային փորձագետներից բաղկացած խումբը EU4Sevan ծրագրի շրջանակում իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ՝կարեւորելով կոյուղաջրերի մաքրման մեթոդի ու տեսակի ընտրության (ներառյալ բնահեն եղանակով), հիմնավորված տեխնիկական, ֆինանսական, սոցիալական ու ինստիտուցիոնալ խնդիրները: Եվ կոյուղաջրերի մաքրման առաջարկվող տարբերակներից ամենաարդյունավետը կոյուղաջրերի մաքրման կայանների կառուցումն է:

Իսկ ի՞նչ առավելություններ կունենա կայանի կառուցումը:

Ի դեպ, խոսքը ոչ միայն գետերով հոսող, քաղաքներից եկող կեղտաջրերի մասին է, այլ նաեւ Սեւանա լճի ափամերձ տարածքներում գործող տարատեսակ հասարակական օբյեկտների՝ ռեստորանների, հյուրանոցների եւ սպասարկման վայրերի, որոնք եւս արտանետում են զգալի չափով կեղտաջրեր:

Խեւանա լիճը Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն՝ որպես տարածաշրջանային բարձրլեռնային քաղցրահամ ջրի ամենամեծ պաշար: Որպես բնատարածքային համալիր՝ լիճն իրենից ներկայացնում է բնության տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն եւ ունի կլիմայագոյացնող կարեւոր նշանակություն ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանային եւ գլոբալ առումով: Այն ազգային անվտանգության եւ ռազմավարական գերակա նշանակություն ունեցող բնական պաշար է, որի պահպանության գործում անելիք ունենք բոլորս:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՓԱՌԱՏՈՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր՝ Հայաստանում» միջազգային փառատոնը, որի շրջանակում ապրիլի 3-26-ը Երեւանում եւ Գյումրիում մի շարք համերգներ են կազմակերպվել, եզրափակվել է «Ասոնանս» անսամբլի համերգով: Փառատոնի ընթացքում հանդիսատեսը մեծ ջերմությամբ է ընդունել ութ համերգները, որոնք անցկացվել են «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, Գաֆեսճյան արվեստի կենտրոնում, ՀԲԸՄ Հայաստան դահլիճում եւ Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում: «Ուրախ ենք, որ ունկնդիրը ոգեւորությամբ եւ հետաքրքրությամբ ընդունեց փառատոնային համերգները: «Խաչմերուկներ» ժամանակակից երաժշտության միջազգային փառատոնը միակն է Հայաստանում, որտեղ ներառվում են համաշխարհային ժամանակակից ակադեմիական երաժշտության մեծամասնակ նոր եւ նշանակալից գործեր:

Հավատարիմ մնալով մեր առաքելությանը՝ այս տարի եւս իրականացվեցին մի շարք հայաստանյան եւ համաշխարհային պրեմիերաներ, ինչպես նաեւ նորարարական նախաձեռնություններ»,- նշում են փառատոնի նախաձեռնող «Քառորդ տոն» մշակութային ՀԿ-ից: Փառատոնի բացման համերգը տեղի է ունեցել ապրիլի 3-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում. անկրկնելի ելույթ է ունեցել դաշնակահար եւ կոմպոզիտոր Իվ Էգոյանը (Կանադա): Նա հանդես է եկել նաեւ վարպետության դասով:

Ապրիլի 7-ին ՀԲԸՄ-ում անցկացվել է վարպետության դաս երաժշտագետ եւ ձայնային տեսաբան Գաշիա Ուզունյանի (Միացյալ Թագավորություն) մասնակցությամբ: Ապրիլի 9-ին փառատոնային թիմն ուղեւորվել է Գյումրի. Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում Իվ Էգոյանը ներկայացրել է ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ապրիլի 11-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահի ներքնահարկում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում կոմպոզիտորներ Տիգրան Մանսուրյանի, Յուրի Կասպարովի (Ռուսաստանի Դաշնություն), Արամ Հովհաննիսյանի եւ երաժշտագետ Սվետլանա Սարգսյանի մասնակցությամբ: Նույն օրը «Առնո Բաբաջանյան» համերգասրահում «Ասոնանս» անսամբլը ներկայացրել է ժամանակակից երաժշտություն: Յուրի Կասպարովը հանդես է եկել վարպետության դասով: Ապրիլի 14-ին Գաֆեսճյան արվեստի կենտրոնը հյուրընկալել է դաշնակահար Լորանս Մխիթարյանին (Բելգիա):

Փառատոնը հարթակ է հանդիսացել նաեւ սկսնակ արվեստագետների համար. ՀԲԸՄ Հայաստան դահլիճում ապրիլի 17-ին ելույթ են ունեցել ԵՊԿ ուսանողներն ու շրջանավարտները: Ապրիլի 20-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում մենահամերգով հանդես է եկել ՀՀ վաստակավոր արտիստ, դաշնակահար Հայկ Մելիքյանը, իսկ ՀԲԸՄ Հայաստան դահլիճում ապրիլի 22-ին ելույթով հանդես են եկել ջութակահար Կարեն Շահգալդյանը, թավջութակահար Դմիտրի Պրոկոֆեւը եւ դաշնակահար Նատալիա Սոկոլովսկայան: Փառատոնն ապրիլի 26-ին ամփոփվել է «Ասոնանս» անսամբլի գեղեցիկ համերգով: «Խաչմերուկներ 2023» ժամանակակից երաժշտության միջազգային փառատոնը միակն է Հայաստանում, որտեղ ներառվում են համաշխարհային ժամանակակից ակադեմիական երաժշտության մեծաքանակ նոր եւ նշանակալից գործեր:

Դրանց զգալի մասն առաջին անգամ է կատարվում, այսինքն՝ փառատոնը բեմ է հանդիսանում դրանց հայաստանյան եւ համաշխարհային պրեմիերաների համար: Փառատոնը մշտապես նպատակ ունի ապահովելու համաշխարհային ժամանակակից երաժշտության տարածումը եւ զարգացումը Հայաստանում: Ծրագիրն ամեն տարի հնարավորություն է ստեղծում հայ երաժշտասեր հասարակության համար՝ մշտապես տեղեկացված լինելու արդի ժամանակակից դասական երաժշտության զարգացումներին եւ միտումներին, ինչպես նաեւ նպաստում է նոր ստեղծագործությունների ստեղծմանը:

Փառատոնն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարության եւ «Առնո Բաբաջանյան» համերգասրահի աջակցությամբ:

2023-24 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Մայիսի 2-ից մեկնարկել է 2022-23 ուսարում Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների առաջին դասարան գնացող երեխաների ընդունելության հայտագրմանն ընդառաջ տվյալների ստուգման գործընթացը:

Առաջին դասարանցիների հայտագրման գործընթացի համար պարտադիր է երեխայի տվյալների վավերականությունը ստուգել https://stugum.emis.am կայքում:

Եթե 1-ին դասարան ընդունվող երեխայի ծնողներից մեկը տվյալ դպրոցի աշխատակից է, ապա ստուգումն անցնելիս անհրաժեշտ է կատարել համապատասխան նշումը եւ սեղմել «Ստուգել» սեղմակը:

Եթե 1-ին դասարան ընդունվող երեխան տվյալ դպրոցում սովորող քույր կամ եղբայր ունի, ապա անհրաժեշտ է կատարել համապատասխան նշումը, բացված դաշտում լրացնել դպրոցում արդեն սովորող երեխայի հանրային ծառայության համարանիշը եւ սեղմել «Ստուգել» սեղմակը:

Եթե առաջին դասարան ընդունվող երեխայի ծննդյան վկայականը թվայնացված չէ, ապա պետք է երեխայի տվյալները լրացնել անհրաժեշտ դաշտերում եւ հարցում ուղարկել:

Գործընթացն առավել հեշտացնելու նպատակով Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը պատրաստել է պատկերային ուղեցույց, որը կարող եք տեսնել այս հղմամբ՝ https://bit.ly/3AKl717:

Բուն հայտագրման գործընթացը նախատեսվում է հունիսից. հստակ օրվա մասին լրացուցիչ կհայտարարվի:

Համակարգի հետ կապված տեխնիկական հարցերի մասին անհրաժեշտ տեղեկատվություն կարելի է ստանալ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից, հեռ.՝

(010) 578455, (011) 578455, (010) 578453, (011) 578453:

ԼՈՒՐԵՐ

ՇԵՐԸ ԲԱԺԱՆՎԵԼ Է

Անցյալ տարվա վերջին շշուկներ էին պտտվում Շերի նոր սիրավեպի մասին: Նրա ընտրյալը 37-ամյա ռեփեր Ալեքսանդր Էդվարդսն էր (երգչուհին 76 տարեկան է, թեեւ ո՞ւմ են պետք այս թվերը): Երեկ հայտնի դարձավ, որ զույգն, ամեն դեպքում, բաժանվել է: Թվում էր, թե ամեն ինչ շատ լուրջ է (ոմանք գրել են սիրահարների նշանադրության մասին):

Շերն ու Ալեքսանդրը վեց ամիս հետո վերջ դրեցին իրենց հարաբերություններին. այս մասին հայտնում է TMZ-ն: Ինչը հանգեցրեց բաժանման՝ անհայտ է: Հաղորդվում է միայն, որ զույգը երբեք լուրջ հարաբերություններ չի ունեցել:

Շերն իր կյանքում շատ սիրավեպեր է ունեցել: «Իմ կյանքում մի քանի տղամարդ պակաս է եղել, քան Կլեոպատրայի», - մի անգամ խոստովանել է աստղը Դեւիդ Լեթերմանի շոուի եթերում: 16 տարեկանում նա հանդիպել է պրոդյուսեր Սոնի Բոնոյին (նրանց հարաբերությունները արագ վերածվեցին սիրո): Ամուսնության ընթացքում նրանք ունեցան դուստր՝ Չեստիտիին, բայց շուտով զույգը բաժանվեց: Արդեն 1975 թվականին նա ծանոթանում է երաժիշտ Գրեգ Ալմանի հետ: Նույն տարում նրանք ամուսնացան, սակայն 9 օր անց երգչուհին ամուսնալուծության հայց ներկայացրեց՝ որպես պատճառ նշելով ամուսնու՝ ալկոհոլից ու թմրանյութերից կախվածությունը: Մեկ տարի անց նա որդի ունեցավ: Այդ ժամանակվանից ի վեր նա չի ամուսնացել:

ՄՆԱՑԵԼ Է 8 ՕՐ

2022-2023 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական եւ 2023 թվականի բուհերի ընդունելության համար բուհի եւ մասնագիտության ընտրության եւ ընտրած մասնագիտության համար սահմանված միասնական եւ ներբուհական քննությունների հայտագրման գործընթացը սկսվել է:

Ապրիլի 15-ից մինչեւ մայիսի 10-ը պետական ավարտական քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը պետք է մուտքագրվեն Գնահատման եւ թեստավորման կենտրոնի app.diշord.aշ էլեկտրոնային կայքում:

Շրջանավարտը (դիմորդը) բուհը եւ մասնագիտությունը նշելու եւ նշված մասնագիտության համար սահմանված ընդունելության քննությունները հանձնելու կամ հանձնած քննությունները մուտքագրելու համար պետք է ունենա ԳԹԿ անձնական համար եւ մինչեւ մայիսի 10-ը առցանց եղանակով Գնահատման եւ թեստավորման կենտրոնի diշord.aշ կայքէջում լրացնի ընդունելության դիմում-հայտ:

Յուրաքանչյուր քննության համար դիմորդը պետք է վճարի 1500 դրամ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Էլեն Էդուարդի Եղիազարյանս, 2018թ. ավարտել եմ Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «Լեզվաբանության եւ միջմշակութային հաղորդակցություն» ֆակուլտետը: 2023թ.-ին կորցրել եմ իմ դիպլոմը: Գտնողներին խնդրում եմ արձագանքել (091988888):

● Մայիսի 6-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Մատնաչափիկ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 13:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է գրավի առարկայի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածվում:

Գագիկ Իսկանդարյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձեւով ծանուցում է գրավատուին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին: Գրավատունն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը:

Դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար: Բռնագանձման ծանուցումը պարտապանին պատշաճ ձեւով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ, ինչպես նաեւ խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու եւ դրա անվտանգությունն ապահովելու համար: Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195-րդ հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն եւ գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել:

ՀՀ կառաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ շրջանառության հարկ վճարողի կողմից շրջանառության հարկով հարկվող օբյեկտը թաքցնելու դեպքում ինչ պատասխանատվություն է կիրառվում:

Վահան Սահակյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վ. Սահակյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողների կողմից հարկվող օբյեկտը թաքցնելու դեպքում գանձվում է դրա արդյունքում պակաս հաշվարկված շրջանառության հարկի գումարը, ինչպես նաեւ տուգանք՝ այդ գումարի 100 տոկոսի չափով:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողների կողմից հարկվող օբյեկտը թաքցնելու դեպքում հաշվարկված հարկային պարտավորությունները պետական բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Համբարձում Հակոբյանը մրցեց եւ զիջեց չին մարզիկին 5:0 հաշվով, իսկ Ռաֆայել Հովհաննիսյանը 4:1 հաշվով առավելության հասավ Իսրայելի ներկայացուցչի նկատմամբ:

Բռնցքամարտի 2023 թվականի աշխարհի առաջնությունը անցկացվում է Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում: Աշխարհի առաջնությունը մեկնարկել է մայիսի 1-ին եւ կեզրափակվի մայիսի 14-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 + 6 + 11
Կոտայքի լեռներ	- 1 + 9 + 6 + 11
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 6 +12 + 15
Գեղարքունիք	- 2 + 2 + 4 + 8
Լոռի	- 1 + 2 + 8 + 12
Տավուշ	+ 3 + 6 +20 + 24
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 5 + 8
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 6 +11 + 16

Արարատ	+ 6 + 9 +16 + 19
Արմավիր	+ 5 + 8 +16 + 18
Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 + 4 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 8 +16 + 18
Սյունիքի հովիտներ	+ 5 + 9 +11 + 16
Սյունիքի նախալեռներ	0 + 4 + 4 + 9
Արցախ	+ 5 + 9 + 11 + 16
Երեւան	+ 5 + 7 +15 + 17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.5.2023**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*